



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՌՈՑ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀՆՈՒԱՆԿԱՐՆԵՐ.— Անցյալ 1954 թվականին խոշոր աշխատանքներ կատարվեցին Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի շինարարության և բարեկարգման ուղղությամբ: Կառուցվեցին 50-ից ավելի գեղեցիկ բազմահարկ շենքեր, որոնցից 30-ը պետական բնակելի տներ, շուրջ 40.000 բազակուտի մետր բնակելի տարածությամբ: Բացի այդ, կառուցվեցին ավելի քան 300 անհատական բնակելի տներ, ֆաղաքը գեղեցիկացավ նորակառույց հասարակական և վարչական շենքերով, դպրոցներով, լաճի ծավալ ընդունեց արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարությունը: Բացվեցին նոր փողոցներ, Ընդարձակվեց ջրմուղի ցանցը: Ավարտվեց կոյուղու գլխավոր դժի կառուցումը, որով կոյուղու ողջ ցանցը միացվեց այդ դժին: Մի քանի տասնյակ հեկտարով ընդարձակվեց բաղաձիկ երկաթուղի նորատունկ անտառների տարածությունը: Ֆաղաքի նոր բացված փողոցներում ասֆալտապատվեց ավելի քան 150.000 բառակուսի մետր տարածություն:

Ավելի մեծ աշխատանքներ են նախատեսված 1955 թվականի համար: Կառուցվելու են շուրջ 50 բազմահարկ բնակելի շենքեր, չհաշված անհատական բնակելի տները: Ավարտվելու և օգտագործման են հանձնվելու Երևանի նրկաթուղային նոր կայարանի, Աշխատանքի պալատի, Պոլիտեխնիկական ինստիտուտի, Մատենադարանի հույակապ շենքերը: Կառուցվելու են 4 նոր դպրոցներ, Արազացվելու է Պետական համալսարանի և Բժշկական ինստիտուտի շենքի նոր հատվածի շինարարությունը: Միևյանի ռայոնում կառուցվելու է նոր խոշոր հիվանդանոց, Ավարտվելու է Հրազդանի վրա կառուցվող կամուրջի շինարարությունը, որով հնարավորություն կստեղծվի Շահումյանի շրջանը կապել քաղաքի հետ տրամվայի միջոցով: Կսկսվի կարի, կահույքի, ինչպես նաև սննդի արդյունաբերության մի քանի նոր ձեռնարկությունների կառուցումը: Նախատեսված է ամբողջովին ավարտել բաղաձիկ երկու նոր գլխավոր փողոցների՝ Մարքսի և Կոմիտասի անվան փողոցների շինարարությունը ու բարեկարգումը:

Շարունակվելու են պետության ավերի ամրացման աշխատանքները, ընդարձակվելու են կոյուղին, ջրմուղը և էլեկտրական ցանցը:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ.— Նախնական տվյալներով այս տարի Լենինականի բաղաձիկ Սովետի գծով կատարվելու է ավելի քան 30.000.000 ռուբլու շինարարություն: Այդ գումարը ղգալի չափով ավելի է անցյալ 1954 թվականին ծախսված գումարից: Գրա մեջ չեն մտնում սեպտեմբերական և միութենական ննթակայության ձեռնարկությունների գծով նախատեսվող ներդրումները:

Այս տարի սկսվելու է կահույքի և մահակալի գործարանների կառուցումը: Կառուցվելու են մի շարք խոշոր բնակելի և վարչական շենքեր, բարեկարգվելու են ծախսամասային փողոցները, քաղաքի շրջակայքում, ավելի քան 30 հեկտար տարածությամբ վրա տնկվելու են ծառեր: Շահագործման են հանձնվելու շուրջ 500 անհատական բնակելի տներ:

ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ.— Սպիտակ ավանում շահագործման հանձնվեց կիրառական շինարարության գործարանը: Կիրառական շինարարության գործածվում է հրուշակեղենի տրտագրության մեջ: Գործարանը կառուցվել է ՍՍՌՄ Պարենային այգիների արդյունաբերության միջնորությունը: Նորակառույց ձեռնարկության համար հումք է ծախսվելու շաքարը, որը մատակարարվելու է նույն ավանում գտնվող շաքարի գործարանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆՈՒՅՑՆԵՐ.— Երևանի ժամացույցի գործարանը տարեցտարի ընդարձակվում է, բարելավվում է թողարկվող արտադրանքի որակը: Եթե 1950 թվականին գործարանը թողարկել է 183.000 հատ սեղանի ժամացույց, ապա ընթացիկ 1955 թվականին թողարկվելու է 1.200.000 հատ: Այս տարի կսկսվի գործարանի նոր շենքի կառուցումը, որի ավարտումից հետո արտադրանքի թողարկման ծավալը կկրկնապատկվի: Առաջիկայում այստեղ արտադրվելու են հատուկ հաստոցներ ժամացույցի արդյունաբերության ձեռնարկությունների համար:

ՆՈՐ ԶԵՆՈՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ.— Բուռն թափով աճում է Կիրովականը, զարգանում գաղաթի արդյունաբերությունը, Ընթացիկ տարում այստեղ շահագործման է հանձնվելու ավտոմոբիլների նորոգման գործարանը, Եռտող սկսվելու է երկաթ-բետոն կոնստրուկցիաների (հատվածների) գործարանի կառուցումը: Այդ կոնստրուկցիաները գործածվելու են շենքերի կառուցման մեջ:

Նախատեսված է այս տարի սկսել կարի, կահույքի և գորգագործական խոշոր գործարանների կառուցումը:

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ.— Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում ավարտվեց ձմեռային սեսիան, որին մասնակցեցին մոտ 4.000 հեռակայող ուսանողներ: Նրանք աշխատում են ինչպես Երևանում, այնպես էլ ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում և բարձրագույն կրթություն են ստանում առանց իրենց հիմնական զբաղմունքից կտրվելու: Հեռակայողները տարիկան միայն 2 անգամ որոշ ժամանակով հավաքվում են ինստիտուտում՝ սեսիոն պարապմունքների կամ քննությունների համար:

Հոնվարին ինստիտուտում տեղի ունեցած պետական քննություններին մասնակցեցին շուրջ 400 հոգի: Ինստիտուտին հեռակայող մոտ 800 մանկավարժներ այս տարի կստանան բարձրագույն կրթության վկայական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Երևանի կուլտուրական հաստատություններից մեկն է հանդիսանում Հայաստանի երկրաբանական թանգարանը: Այստեղ կարելի է տեսնել Հայաստանի լեռնահանքային հարստությունների ամենատարբեր նմուշներ: Դրանց թվում կան նաև երկրաբանական հետախուզությունների ժամանակ հայտնաբերված նախնադարյան կենդանիների մնացորդներ:

Վերջերս թանգարան բերվեցին նախապատմական փղի ոսկորներ, որոնք գտնվել են Էջմիածնի շրջակայքում, Մասնագետների կարծիքով, այդ հայտնաբերումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Դա պատահական չէ, քանի որ նման ոսկորների գտնվել են նաև Լենինականի շրջակայքում մի քանի տարի առաջ: Այդ բոլորը վկայում են, որ հնագույն ժամանակներում, շուրջ 100.000 տարի մեզանից առաջ, Հայաստանում ապրել են ժամանակակից փղերի նախնիները:

ՆՈՐ ԳՐԲԵՐ 1955 ԹՎԱԿԱՆԻՆ.— Հայաստանի պետական հրատարակչությունը այս տարի ղգալիորեն ընդարձակելու է իր գործունեությունը: Բացի գիտական, քաղաքական, մասնագիտական գրականությունից, հրատարակվելու են ինչպես կլասիկ, այնպես էլ ժամանակակից հայ, ռուս, եվրոպական հեղինակների մի շարք գեղարվեստական գործերը:

Հայ հեղինակներից լույս կտեսնեն Հ. Պարոնյանի, Նար-Դոսի, Դ. Վարդաժանի, Ա. Բաճակյանի, Վ. Տեր-յանի, Դ. Դեմիրճյանի և ուրիշների ընտիր երկերը: Կոկտիլի հայ մեծանուն վիպասան Բաֆֆու երկերի հրատարակությունը 10 հատորով:

Ժամանակակից հայ գրողներից և բանաստեղծներից հրատարակվեն Մ. Արազու, Ն. Զարյանի, Հ. Միրախի,

Մ. Արմենի, Գ. Էմինի, Սարմենի, Հ. Երազի, Մ. Բորգոմյանի, Հ. Սահյանի, Ա. Սահյանի և մյուսների ընտիր երկերը: Արգեն լույս են տեսել Վ. Ալազանի, Վ. Նորենցի, Գ. Մահարու բանաստեղծությունների ժողովածուները:

Ընթացիկ տարում 30.000 օրինակով լույս կտեսնի Եղիշե Զարենցի երկերի մի նոր ժողովածու, որի մեջ տեղ է տրվելու նրա արձակ գործերին:

Հրատարակվելու են մեծ քանակությամբ գեղարվեստական գրքեր մանուկների համար, ինչպես նաև շուրջ 100 անուն դասագրքեր հանրակրթական դպրոցների սովորողների համար՝ մոտ 2.000.000 օրինակ տպաքանակով:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԲՈՒՆԸ.— Անցյալ 1954 թվականին Հայաստանի ագեգործական շրջանների կոլեկտիվ անտի-սոցիալիզմը ստացան 60.000 տոննա խաղողի բերք: Դա 20.000 տոննայով ավելի էր, քան նախորդ 1953 թվականին, Ամբողջ բերքի մեկ քառորդը ստացան Արտաշատի շրջանի տնտեսությունները: Պետությունը հանձնված խաղողի դիմաց հիշյալ շրջանի տնտեսությունները ստացան մոտ 70.000.000 ռուբլի, որը կրկնակի անգամ ավելի էր 1953 թվականին ստացած եկամուտից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ.— Գյուղատնտեսական մարմինները բացառիկ ուշադրություն են նվիրում Հայաստանի անտառների պահպանմանը և ընդարձակմանը: Անտառային տարածությունները տարեցտարի ընդարձակվում են: Անցյալ տարի ռեսպուբլիկայի տարբեր վայրերում 3.300 հեկտար տարածություն վրա հիմնվեցին նոր անտառներ՝ տնկումների և ծառատերմերի ցանքի միջոցով: Վերջին հինգ տարում նոր հիմնված անտառների տարածությունը կազմում է 15.000 հեկտար:

Անտառներ են հիմնված Բաքալի շրջաններում, որտեղ մինչ այդ նման ձեռնարկությունը համարվում էր անիրագործելի: Այդպիսի շրջանների թվին են պատկանում Կոտայքի, Հոկտեմբերյանի, Նոր Բայազետի, Մարտունու, Բասարդեշարի շրջանները: Երկարամյա փորձերի ու դիտումների հիման վրա ընտրված են ծառերի ու թփերի այնպիսի տեսակներ, որոնք կարողանում են դիմանալ Հայաստանի ցամաքային խիստ կլիմային:

Ամեն տարի ռեսպուբլիկայում անտառատնկման աշխատանքների վրա պետությունը ծախսում է 10—12.000.000 ռուբլի:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՎԱՐՏԵՏԻ 30-ԱՄՅԱԿԸ.— Երեվանի երաժշտական հասարակայնությունը սույն հոնվարի վերջերին նշեց Կոմիտասի անվան պետական կվարտետի 30-ամյակը:

Երաժշտական այդ կոլեկտիվը կազմակերպվել է 1925 թվականին Մոսկվայում, Մոսկվայի կոնսերվատորիայի այն ժամանակվա ուսանող, այժմ Հայաստանի ժողովրդական արտիստ, ջութակահար Ավետ Գաբրիելյանի կողմից: 30 տարվա գոյության ընթացքում կվարտետը, անդադար կատարելագործելով իր վարպետությունը, ձեռք է բերել մեծ համբավ, դարձել Սովետական

տական Միության մեջ ճանաչված, լայն ժողովրդականություն վայելող լավագույն երաժշտական կոլեկտիվներից մեկը։ Նրա սեփականության մեջ մտնում են եվրոպական, ռուս և հայ երաժշտագետների լավագույն գործերը, որոնց թվում խոշոր տեղ են գրավում անմահ Կոմիտասի գործերը։

Վերջին տարիներին կվարտետը համերգներով հանդես է եկել Զեյնուլափաջում, Լոնդոնում և Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում՝ ամենուրեք արժանանալով բացառիկ հաջողության։

Ներկայումս կվարտետի կազմում են՝ նրա հիմնադիրը և անփոխարինելի ղեկավարը, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Ավետ Գարրիբյանը (առաջին ջութակ), ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Սերգեյ Ասլամազյանը (թավջութակ), Ռաֆայել Դավթյանը (2-րդ ջութակ) և Հենրիխ Թալալյանը (ալտ)։

Հորեյանական հանգեսին ներկա էր մեծ թվով հասարակություն։ Կվարտետին ողջունեցին Երևանի երաժշտական և կուլտուրական հաստատությունների ներկայացուցիչները։ Ստացվել էին բազմաթիվ հեռագրեր Սովետական Միության տարբեր վայրերից։ Հանդեսից հետո կայացավ համերգ կվարտետի կատարմամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՄՈՆՆԵՐ.— Հայաստանում արտադրվող մրգեղենի, բանջարեղենի, ինչպես նաև մսեղեն ու ձկնեղեն պահածոները և մուրաբաները իրենց համեղությամբ ու որակով հռչակված են ոչ միայն ամբողջ ռեսպուբլիկայում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Պահածոների գործարաններ կան Երևանում, Լենինականում, Հոկտեմբերյանում, Ալյուումում, Ղափանում, Մեղրիում և Մարտունիում։ Հիշյալ գործարաններն անցյալ 1954 թվականին թողարկեցին մոտ 11.000.000 տոնի ավելի արտադրանք, քան նախորդ 1953 թվականին։ Արտադրվել են 80 տարբեր տեսակի պահածոներ։

Վերահիշյալ գործարանները ներկայումս պատրաստվում են ընթացիկ տարվա արտադրական սեզոնին։ Այս տարի նրանք թողարկելու են զգալի շափով ավելի արտադրանք, քան անցյալ տարի։ Այդ նպատակով մի քանի գործարաններ հագեցվում են նոր մեքենաներով։

ԱԶԳԱՐԱՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Երթևեկության դանադան միջոցներից բացի, Երևանի ընակչությունը լայնորեն օգտվում է նաև տաքսի ավտոմեքենաներից։ Դրանց թիվը մայրաքաղաքում այժմ 200-ից ավելի է։ Դրանք բոլորն էլ սովետական «Պա-

բեդա» ավտոմեքենաներ են։ 1954 թվականին տաքսի մեքենաները փոխադրել են մի քանի միլիոն ուղևորների։

ՍԱՌՑԱՍՊԱԿԱՆԴԱՆՈՅ ՂԱՓԱՆՈՒՄ.— Ղափանում կառուցվում է նոր սառցապահանոց, Սպանդանոցը օրական կարող է մշակել 20 տոննա միս, իսկ սառցարանը մի անգամից կարող է ընդունել մինչև 500 տոննա մթերք։ Նոր ձեռնարկությունը կհաղեցվի կատարելագործված մեքենաներով և այլ հարմարանքներով։

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ.— Ամեն տարի կառավարությունը խոշոր միջոցներ է ծախսում բնակչության առողջապահության գործի բարելավման համար։ Այսպես, օրինակ, անցյալ տարի միայն Կիրովական քաղաքում բացվել են առողջապահական 6 նոր հիմնարկներ, որոնց թվում՝ մանկական հիվանդանոց 35 մահճակալով, մի բուժարան քաղաքի արվարձաններից մեկում և առողջապահական 4 կայաններ քաղաքի տարբեր գործարաններում։ Բացվեցին նաև 2 նոր ռենդգենյան կաբինետներ։

Քաղաքի բնակչության առողջապահության գործի վրա 1954 թվականին ծախսվել է 2.000.000 ռուբլի ավելի գումար, քան նախորդ 1953 թվականին։ Քաղաքի հիվանդանոցներում մահճակալների թիվը մեկ տարվա ընթացքում ավելացել է 15 տոկոսով, իսկ բժշկական աշխատողների թիվը ավելացել է 70 մարդով։

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ-ԲԱՆԳԱՐԱՆԸ.— Հայ նոր գրականության հիմնադիր, մեծանուն խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը, որը գտնվում է Քանաքեռ գյուղում, ամեն մի հայի համար հարազատ վայր է։ Անցյալ 1954 թվականին տուն-թանգարանն այցելել է 30.000 մարդ՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ Սովետական Միության տարբեր վայրերից։ Այստեղ կան բազմաթիվ փաստաթղթեր, ձեռագրեր, նամակներ, նկարներ, դրեր և այլ նյութեր, որոնք նվիրված են մեծանուն գրողի կյանքի և գործունեության տարբեր շրջաններին։

Այս տարի լրանում է գրողի ծննդյան 150-ամյակը։ Այդ կապակցությամբ թանգարանի գիրկից հանձնառվա է եղել բազի և շրջակայքի բարեկարգմանն ու կանաչապատմանը։ Բակում կառուցվում է աղբյուր-հուշարձան։ Թանգարանը համարվելու է նոր նյութերով։

